ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2222-Ա « 30 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 543-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N 543-Ա որոշմամբ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Զաքարիա Քանաքեռցու փողոցի հ.54/6 շենքի հ.6՝ 43,68քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարվել է Սամվել Հենրիկի Եսայանին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N 543-Ա որոշումը.

1.Լիազորել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար՝ Արտակ Հովակիմյանին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Սամվել Հենրիկի Եսայանի հետ կնքել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.05.2025թ. հ.20052025-01-0271 վկայական) Զաքարիա Քանաքեռցու փողոցի հ.54/6 շենքի հ.6՝ 43,68քմ մակերեսով բնակարանի նվիրատվության պայմանագիր:

2.Ընդունել ի գիտություն, որ.

1) նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում.

2)պետական գրանցման, նոտարական վավերացման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուի կողմից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ